

«ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

Սարգսյան Գ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, Հայաստան)

gagsar@mail.ru

Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, հուշարձան, պատմություն, պահպանություն, օրենսդրական ակտ, վերականգնում:

Մարդու կողմից ստեղծված պատմության և մշակույթի արժեքների «հուշարձան» ընդհանրացնող անվանումը նորօրյա երևույթ է: Պատմական սկզբնաղբյուրներում դրանք հիշված են իրենց բուն գործառնական նշանակությունը բնութագրող անվանումներով՝ ամրոց, բերդ, եկեղեցի, վանք, մատուռ, գավիթ կամ ժամատուն, տապանաքար, գերեզմանոց, ձիթհան, ջրաղաց և այլն: Միջնադարի հայ իրականության մեջ օգտագործելի է եղել նաև առավել ընդհանրացնող անվանումներ, որոնցից հաճախադեպ է «արձան» բառեզրը: Այն կիրառվել է, հիմնականում, փոքր չափերի քարակոթողների կապակցությամբ. բառարաններում «արձանը» մեկնաբանված է, «կոթող, կանգուն քար, քարե սյուն, մահարձան, գերեզմանին կանգնեցված քար, սահմանիչ քար կամ սահմանաքար, նաև մարդու եռաչափ քանդակ, քարե կամ փայտե կուռք» և այլն:

«Հուշարձան» հասկացության միջնադարյան հոմանիշ կարելի է դիտել «աւերակ» բառը՝ զուգորդված վերը հիշված հոգևոր և աշխարհիկ շինությունների հետ: Մատենագրական վկայություններում այս բառեզրը հաճախ օգտագործվել է ավերված, քանդված կառույցը կամ բնակավայրը վերաշինելու, վերականգնելու կապակցությամբ:

XIX դարում շրջանառության մեջ է դրվում «հնութիւնք» հասկացությունը, որը գոյատևում է մինչև XX դարի 20-ական թվականները, չնայած Ռուսական կայսրությունում, որին սերտորեն

կապված էր հայ իրականությունը, արդեն XIX դարի վերջին տասնամյակներում կիրառվում էր հոլշարձան բառը (памятник):

XX դարի 20-ական թվականներից սկսում են օգտագործել, «հոլշարձան» հասկացությունը, սակայն «հնություն» բառի համակցությամբ՝ հնության հոլշարձան: Այդ շրջանում մասնագիտական գրականության մեջ հնությունները կամ հոլշարձանները սկսում են տարբերակել ըստ բնույթ-բնագավառների՝ պատմական, հնագիտական, ճարտարապետական, արվեստի, բնության: Ըստ այդմ էլ բառապաշարում ներառնվեցին պատմական հոլշարձան, հնագիտական հոլշարձան, ճարտարապետական հոլշարձան հասկացությունները:

Խնդրո առարկա բնագավառում «հնություն» բառեզրը օգտագործվեց մինչև 1930-ական թվականների սկիզբը, որից հետո առավել գործածելի դարձավ «պատմական հոլշարձան» հասկացությունը:

«Պատմության և մշակույթի հոլշարձան» հասկացությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերում սկսեց կիրառվել XX դարի 70-ական թվականներից (Հայկական ՍՍՀ «Պատմության և կուլտուրայի հոլշարձանների պահպանության և օգտագործման մասին» (1977 թ.), «Պատմության և մշակույթի անշարժ հոլշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (1998 թ.) ՀՀ օրենքները):

Ի տարբերություն «պատմության և մշակույթի հոլշարձան» հասկացության հայաստանյան օրենսդրական սահմանման, այս բնագավառի միջազգային իրավական փաստաթղթերում և բազմաթիվ երկրների ազգային օրենսդրություններում օգտագործվում է «մշակութային ժառանգություն» ձևակերպումը, Ֆրանսիայում՝ *patrimoine*, Անգլիայում՝ *heritage*:

Որպես իրավաբանական բնորոշում, այս արտահայտությունն առաջին անգամ օգտագործվել է 1972 թ. Միավորված Ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-

ի 17-րդ նստաշրջանում (Փարիզ) ընդունված «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիայում, որտեղ բնութագրված են «հուշարձան», «համալիր», «տեսարժան վայր» հասկացությունները:

«Պատմության և մշակույթի հուշարձան» հասկացության ճիշտ մեկնաբանման տեսանկյունից կարևորվում է դրա և «մշակութային արժեք»-ի բովանդակային և իրավական հարաբերակցության խնդրի պարզաբանումը:

Մինչև 1969 թ., ներառյալ հուշարձանների պահպանության մասին օրենքը, շրջանառություն մեջ էր «մշակույթի հուշարձան» բառեզրը, իսկ 1977 թ. օրենքում այն առավել ընդգրկուն և որոշակի դարձնելու նպատակով լրացվեց՝ «պատմության և մշակույթի հուշարձան» և «մշակութային արժեք» հասկացությունների տարաբաժանումը: Ակնհայտ է, որ ոչ բոլոր մշակութային արժեքները կարող են բնորոշվել որպես հուշարձան, քանի որ «հուշարձանը» ոչ թե և ոչ այնքան մշակութային արժեք ունեցող իրի կամ կառույցի հոմանիշ անվանումն է, այլ իրավական կարգավիճակ, որը ենթադրում է պահպանության (իր բոլոր բաղադրիչներով) որոշակի վերաբերմունք և կանոնակարգ:

THE CONCEPT OF “SITE” AND THE QUESTION OF PRESERVATION IN HISTORICAL CONTEXT

Sargsyan G. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of
Archaeology and Ethnography, Armenia)